


ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ  
ԳԻՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ  
(Ծննդյան 140-ամյակի առթիվ)

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

XIX դարի վերջին քառորդը հայ բանասիրական մտքի պատմության մեջ բնորոշվում է որպես զարգացման մի նոր, բարձր աստիճան: Միջազգային բանասիրության և հայ ազգային մտավոր զարգութիւնը բուռն վերելքի պայմաններում, 60-70-ական թվականներից ի վեր, հայագիտական միտքը հաստատուն քայլերով սկսում է թևակոյն զարգացման մի նոր շրջափուլ: Եթե մինչև հիշյալ հարյուրամյակի 30-ական թվականները հայ



բանասիրությունը սահմանափակվում էր սուկ հայոց լեզվի, այն էլ հիմնականում գրաբարի գիտությամբ, ապա այդ ժամանակաշրջանից սկսած՝ հայ գիտնականների (Ստ. Նազարյանց, Ս. Սոմայան, Ս. Նալբանդյան, Զ. Գայզըրայան, Մ. Էմին, Ստ. Պալաւանյան, Ա. Այտրնյան և այլք) ջանքերով բանասիրությունն ընդլայնում է իր սահմանները, իր մեջ ներառելով և գրականագիտություն, և բանագիտություն, և աշխարհաբար հայերենի ուսմունք, և բնագրագիտություն, մասամբ և ազգագրագիտություն: Փոխվում են նաև հետազոտման եղանակները: Գրեթե միևնույն ժամանակ հայ լեզվաբանության մեջ արմատավորվող պատմահամեմատական մեթոդը զարգացման լայն հեռանկարներ է բացում հայ լեզվաբանության առջև և վերջինիս՝ կրոնաստվածաշնչային մեկնաբանությունների ոլորտից տեղադրում է զիտական կայուն հիմքերի վրա: Պատմահամեմատական մեթոդը միևնույն ժամանակ իր բարերար ներգործությունն է ունենում հայագիտության մեջ նոր սկզբնավորված գրականագիտության, բանագիտության, ազգագրագիտության վրա: 50-60-ական թվականներին Վենետիկի, Վիեննայի, Սուլվայի, Թիֆլիսի, Կ. Պոլսի, մասամբ Էջմիածնի, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայի հայագետների ջանքերով հայ բանասիրությունն սկսում է ապրել կայուն առաջընթաց, որը 70-80-ական թվականներին վերածում է նոր որակի, իսկ դարավերջին արդեն դուրս է բերվում զարգացման լայնահուն մայրուղի: Առանձնակի ծաղկում է ապրում արևելահայ բանասիրական միտքը, որի առաջամարտիկներն են դառնում հաստկապես Գևորգյան ու Լազարյան ճեմարանների այն սաները, ովքեր ի-

դանակները: Գրեթե միևնույն ժամանակ հայ լեզվաբանության մեջ արմատավորվող պատմահամեմատական մեթոդը զարգացման լայն հեռանկարներ է բացում հայ լեզվաբանության առջև և վերջինիս՝ կրոնաստվածաշնչային մեկնաբանությունների ոլորտից տեղադրում է զիտական կայուն հիմքերի վրա: Պատմահամեմատական մեթոդը միևնույն ժամանակ իր բարերար ներգործությունն է ունենում հայագիտության մեջ նոր սկզբնավորված գրականագիտության, բանագիտության, ազգագրագիտության վրա: 50-60-ական թվականներին Վենետիկի, Վիեննայի, Սուլվայի, Թիֆլիսի, Կ. Պոլսի, մասամբ Էջմիածնի, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայի հայագետների ջանքերով հայ բանասիրությունն սկսում է ապրել կայուն առաջընթաց, որը 70-80-ական թվականներին վերածում է նոր որակի, իսկ դարավերջին արդեն դուրս է բերվում զարգացման լայնահուն մայրուղի: Առանձնակի ծաղկում է ապրում արևելահայ բանասիրական միտքը, որի առաջամարտիկներն են դառնում հաստկապես Գևորգյան ու Լազարյան ճեմարանների այն սաները, ովքեր ի-

րենց բարձրագույն կրթությունն ստանալով ելքոպական ու ոռւսական համալսարաններում, առաջավոր զիտելիքներով զինված՝ մի նոր շարժում են առաջ բերում հայագիտության մեջ<sup>1</sup>:

Արևելահայ բանասիրության զիտական նոր սերնդի ամենակարկառուն դեմքն է դառնում Գևորգյան ճեմարանի սան Մանուկ Աբեղյանը (1865–1944 թթ.), որը 1885 թ. «յոյժ գովելի» գնահատականներով և առաջնակարգ մրցանակագրով (դիպլոմ) ավարտելով ճեմարանը և մի քանի տարի գրադարձելով մանկավարժական, զիտական ու լրագրային աշխատանքով, 1893 թ., հայ բարերար Ալեքսանդր Մանթաշյանի նյութական հովանավորությամբ, մեկնում է Գերմանիա ուսանելու: Այստեղ նա ընդունվում է Ենայի համալսարանը որպես բանասիրության և փիլիսոփայության ուսանող: Երկու կիսամյակ ուսանում է Ենայի, երեք կիսամյակ՝ Լայպցիգի, երեք էլ Բեռլինի համալսարաններում, խորամուխ լինելով գերմանական բանասիրության, մասնավորապես լեզվի, գրականության, պատմության և փիլիսոփայության ուսումնասիրության մեջ: 1895-ին Աբեղյանն անցնում է Ֆրանսիա՝ Փարիզ, մեկ տարի ուսանում Սորբոնի համալսարանում՝ որպես բանասիրության ազատ ունկնդիր, ուսումնասիրում հատկապես գրականություն և գրականության տեսություն, հմտանում ֆրանսերենին և խորամուխ լինում ֆրանսիական հարուստ ու գեղեցիկ գրականության մեջ: 1898 թ. Աբեղյանն ավարտական քննության զիսավոր ճյուղ ընտրելով ընդհանուր պատմությունը, իսկ երկրորդական ճյուղ՝ ընդհանուր փիլիսոփայությունը և ֆրանսերեն լեզուն: Այստեղ էլ նա որպես ավարտական դիսերտացիա է ներկայացնում իր «Der armenische Volksglaube» («Հայ ժողովրդական հավատալիքը») աշխատությունը և ստանում փիլիսոփայության դոկտորի աստիճան և դիպլոմ:

1898 թ. Աբեղյանը Գերմանիայից վերադառնում է հայրենիք և անմիջապես աշխատանքի հրավիրվում Էշմիածնի Գևորգյան ճեմարան: Սկսվում է նրա զիտահետազոտական և զիտամանկավարժական գործունեության ամենաբուժն ու արդյունավետ շրջանը:

Նախ հարկ է նշել. որ Աբեղյանի զիտական գործունեությունը ժամանակագրական առումով բաժանվում է երկու հիմնական շրջանի. առաջինը ընդգրկում է 1886–1893 թթ., այսինքն՝ «Մասնա ծոեր» հերոսավեպի Սրբանձույանից հետո երկրորդ պատումի գրառումից մինչև Եվրոպա մեկնելը. երկրորդ շրջանն ընդգրկում է 1896 թվականից, այն է՝ «Գրական դպրոցներ» աշխատության տպագրությունից սկսած մինչև իր արգասավոր կյանքի մայրամուտը:

Մանուկ Աբեղյանի զիտական վաստակը դասական հայագիտության մնայուն ժառանգության մեջ բացառիկ ներդրումներից է: Այն, առաջին հերթին հատկանշվում է հայագիտական տարրեր զիտաճյուղերի համակողմանի ընդգրկմամբ, ապա դրանց զիտական տեսությունների մշակմամբ և համակարգմամբ, ինչպես նաև հետազոտվող նյութի խորագնին

<sup>1</sup>Տե՛ս U. Հարությունյան Մանուկ Աբեղյան, կյանքն ու գործը. Երևան, 1970, էջ 637–638, նաև՝ U. Հարությունյան. Հայագիտություն. – Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 898–920:

*քննություններով: Այլ կերպ ասած՝ հայագիտության տարրեր մասնաճյուղերում նրա մշակած գիտական համակարգերն ու տեսական ուսմունքները հիմնված են տվյալ գիտաճյուղում ընդգրկված առարկաների մասնագիտական խոր ու մանրակրկիտ հետազոտությունների վրա, որի հետևանքով այդ ուսմունքներն ու համակարգերը դառնում են մնայուն ու հիմնարար:*

*Հայագիտական առարկաների ընդգրկման առումով Ս. Աբեղյանի գիտական տեսադաշտը խիստ լայն է և համապարփակ. այն իր մեջ է ներառում բանասիրությանը շահագրգորդ գրեթե բոլոր հիմնական բնագավառները՝ հայ բանահյուսություն, գրականություն, հայոց լեզու, տաղաչափություն, դրանց հետ նաև՝ տեքստարանություն և բառարանագրություն: Բայց խնդիրը սուկ ընդգրկման ծավալի մեջ չէ, այլ այդ տարրեր առարկաների գիտական մշակման որակի և դրանից արտածված գիտական այն արդյունքների, որոնք հայագիտության մեջ դարձան հիմնարար, դասական և հեռանկարային՝ առաջնորդելով հայագիտական միտքը զարգացման նոր բնագծեր:*

*Այս խմատով միանգամայն արդարացի է մեծ բանաստեղծ Պ. Սևալիի՝ Ս. Աբեղյանին տված հետևյալ գնահատականը. «Ս. Աբեղյանի մեջ ներդաշնակ կյանքով ապրում էին թե՝ մեծ լեզվաբանը, թե՝ մեծ գրականագետը, թե՝ մեծ բանագետը, իրենց արանքում տեղ տալով նաև մեծ պատմաբանին և մեծագույն տաղաչափակետին:*

*Ահա թե ինչու ոչ միայն կարող ենք, այլև պարտավոր ենք հպարտությամբ նշելու, որ հայագիտության բոլոր մեծ երախտավորների մեջ առաջաօր Ս. Աբեղյանն է ամենաներդաշնակ, ավելի ճշգրիտ բառով ասած՝ կատարյալ դեմքը»<sup>2</sup>:*

*Ս. Աբեղյանը գիտական ասպարեզ իջավ XIX դարի վերջին տասնամյակներին և իր արդյունավետ գործունեությունը շարունակեց XX դարի առաջին կեսերին, երբ հասարակական գիտությունների բնագավառում կատարվում էին լուրջ տեղաշարժեր, գիտահետազոտական մեթոդների և ուղղությունների պայքար ու հերթագայություն:*

*Իր բարձրագույն կրթությունն ստանալով գերմանական ու ֆրանսիական համալսարաններում (1893–1898 թթ.)՝ Ս. Աբեղյանը միաժամանակ վկան ու ականատեսն է դառնում գիտական տարրեր մեթոդների և ուղղությունների բախմանն ու նորերի հաստատմանը: Լավ յուրացնելով ժամանակի գիտական առաջավոր դպրոցների տեսական ու մեթոդարանական սկզբունքները, մասնավորապես պատմահամեմատական մեթոդն ու դրա հիմքի վրա ձևավորված երիտքերականների նոր ուղղությունը, գրականագիտական կուլտուր-պատմական դպրոցի մեթոդական ելակետերը, ինչպես նաև գրական ու բանահյուսական իրողությունների սոցիալ-պատմական մեկնարանությունների նոր մոտեցումները, Ս. Աբեղյանը դրանք ստեղծագործարար կիրառում է իր բանագիտական, լեզվաբանական ու գրականագիտական հետազա աշխատություններում: Բայց, այ-*

<sup>2</sup> Պ. Սևալի. Պաշտոնական ընդդիմականություն Ս. Հարությունյանի «Մանուկ Աբեղյան» դրվագութական դիմումացիայի մասին, 1971, էջ 4–5, ձեռագիր, պահպան է Ս. Հարությունյանի անձնական արխիվում:

դուամենայնիվ, Աբեղյանի որդեգրած մեթոդաբանական գերազոյն սկզբունքը պատմական մոտեցումն էր՝ բանահյուսական, գրական, լեզվական բոլոր փաստերն ու երևույթները դիտել, քննել ու մեկնաբանել դրանց գոյացման ու զարգացման հարաշարժ ընթացքում, այսինքն՝ պատմական փոփոխությունների մեջ, թե համաժամանակյա և թե տարժամանակյա մակարդակներով։ Պատմականությունը (историзմ) Աբեղյանի գիտական հետազոտությունների հիմնական եղանակն է և նրա մշակած տեսական ուսմունքները (այդ թվում նաև վերջին տասնամյակներում այնքան չարչրկված ուղղագրական բարեփոխումների գիտական հիմնավորումը) ճիշտ հասկանալու և ճիշտ մեկնաբանելու համար անհրաժեշտ է միշտ հաշվի նստել Աբեղյանի գիտական այս ճշմարիտ մոտեցման հետ։

Իսկ ընդհանրապես՝ Աբեղյանի դավանած մեթոդը հետևյալն է, որը նա մի առիթով ձևակերպել է այսպես. «Բանասերը, ինչպես և ամեն իւկական գիտական աշխատող, միայն մեկ մեթոդ ունի, այն է՝ նա բազմակողմանի կերպով ճիշտ դիտում է օբյեկտիվ իրականությունը և դրանից հանում է իր հասկացությունը, ինչպես փիլիսոփայորեն ասում են, մտածությունը անդրապատկերում է օբյեկտիվ իրականությունը։ Սովորական լեզվով ասում ենք, թե հետազոտողն, ուղիղ հետևության հասնելու համար, պետք է բազմակողմանի ուղղատեսություն ունենա իր դիտած առարկայի նկատմամբ, և իր հետազոտության ժամանակ լինի ուղղամիտ և ուղղադատ»<sup>3</sup> (ընդգծումները մերն են. – Ս. Հ.):

Այս գիտական անաշար օբյեկտիվիզմն է միշտ եղել Ս. Աբեղյանի մեթոդական հավատամբը, որին նա հետևել է իր շուրջ 60-ամյա գիտական մեծարդյուն գործունեության ընթացքում։

\* \* \*

Ս. Աբեղյանի գիտական ժառանգության գերակշիռ մասը հետևանքն ու արդյունքն էր եվրոպական համալսարաններում նրա ստացած համակողմանի կրթության։ Բայց մինչև Եվլոպա մեկնելը, նրա գիտական գործունեության առաջին, խիստ կարճատև շրջանում (1886–1893 թթ.) արդեն ձևակորպում են սկսնակ հետազոտողի գիտական նախասիրությունները։ Նրա գիտական նախաքայլերն սկսվում են հայ ժողովրդական նորահայտ վեպի երկրորդ պատումի հայտնաբերումով և գրառումով (1886 թ.), 1889-ին դրա հրատարակումով («Դավիթ և Մհեր»)։ Նոյն 1889 և 1890 թթ. «Սուրբ» ամսագրում Ս. Աբեղյանը «Ազգային վեպ» խորագրով հրատարակում է մի ընդարձակ ուսումնասիրություն, որը մեր նորահայտ հերոսավեպին նվիրված առաջին լուրջ ու ամբողջական հետազոտությունն էր։ Այս զույգ աշխատությամբ առմիշտ կանխանշվում էր Աբեղյանի գիտական ձականագիրը հայ էպոսագիտության և ընդհանրապես բանագիտության ասպարեզում։ Բանասիրության Աբեղյանի նախասիրած հաջորդ ոլորտը՝ հայոց լեզուն էր, մասնավորապես հայերենի հնյունաբանության, շեշտադրության և ուղղագրության խնդիրները, որոնք նրա գիտական գործունեության այս առաջին փուլում արծարծվում

<sup>3</sup> Ս. Աբեղյանի աշխատությամբ առմիշտ կանխանշվում էր Աբեղյանի գիտական ձականագիրը հայ էպոսագիտության և ընդհանրապես բանագիտության ասպարեզում։ Բանասիրության Աբեղյանի նախասիրած հաջորդ ոլորտը՝ հայոց լեզուն էր, մասնավորապես հայերենի հնյունաբանության, շեշտադրության և ուղղագրության խնդիրները, որոնք նրա գիտական գործունեության այս առաջին փուլում արծարծվում

են հեղինակի «Ժողովրդական լեզվի շեշտադրությունը արևելյան ճյուղի բարբառների մեջ», «Գրաբարի երկրարքառներն և ու, թէ՝ և, թէ՝ վ»<sup>4</sup>, «Ուղղագրական նկատողություններ» (1890 թ.), «Հայոց լեզվի ուղղագրությունը» (1892 թ.) ուշագրավ աշխատություններում, որոնց հիմնադրույթները հետազոտում առավել խորացան, ամբողջացան, համալրվեցին նորանոր խնդիրներով հեղինակի լեզվարանական և տաղաչափագիտական հետազոտություններում:

Այս առաջին շրջանում են ձևավորվում նաև Աբեղյանի գիտական նախասիրությունները հայ հին ու նոր գրական երկերի, դեմքերի, մատենագրական հուչարձանների, գրական երևույթների գնահատման նկատմամբ՝ արծարծված 1889–1893 թթ. պարբերական մամուլում հրապարակված նրա տասնյակ գրախոսականներում ու հոդվածներում։ Դրանք կանխանշում էին երիտասարդ հեղինակի շահագրգորությունները հայ բանասիրության մեկ այլ մեծ բնագավառի՝ գրականության և նրա պատմության նկատմամբ։

Աբեղյանի գիտական գործունեության երկրորդ շրջանում, եկրոպական համալսարաններում ձեռք բերված տեսական գիտելիքների և նորա-

<sup>4</sup> Սի քանի տարի առաջ՝ 1998 թ. մայիսի 23-ին, Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորներից մեկը (Կ. Ռուբինյան) նախագիծ էր ներկայացրել խորհրդարան հայոց այրութենից վստարելու ու տառը, որպես ու և տառերի համակցում և վոխարենք գործածել միայն նշանը, որն, ի դեպ, նոր հայերենում (և դեռ դրանից էլ առաջ) չունի իր համապատասխան հնչյունը և եթե առանձին դեպքում օգտագործվում էլ է, ապա միայն վ հնչյունի համար։ Այս «նորամուծություններ» պատգամավորը պատճառաբանում է հանուն մաշտոցան այրութենի սկզբունքների վերականգնման։

Ահա ինչ է գրում ու երկտափական համար երիտասարդ Ս. Աբեղյանը տակավին 1890 թ.՝ գրաբարի երկրարքառների խնդիրը քննելիս և նոր հայերենում դրանց պարզ ձայնավորների վերածման օրինաշափությունները «ահմանելի»։ «Ու երկտառը նոր լեզվի (նոր հայերենի – Ս. Հ.) մեջ փոփոխության միննույն կանոնին չի ենթարկվում, որին ենթարկվում են մյուս աւ, եւ, իւ, իւ երկրարքառները։ Մինչդեռ վերջինները բառի վերջում և բառի մեջ ձայնավորից առաջ դառնում են ավ, եվ, իվ վանկեր, ու-ն չի դառնում ով, այսինքն չի պահում յուր բաղադրիչ և վ դարձած ւ-ի հնչյունը։ Բառի վերջում ու-ն արտասանվում է ինչպես պարզ ձայնավոր ու (ց), իսկ բառի մեջ ձայնավորից առաջ ինչպես բառ վանկ <...> Բառի վերջում և բառի մեջ ձայնավորից առաջ ու երկտափական հարտականությունն եղած պիտի լինի ահա ու(ց) պարզ ձայնավոր, և ոչ երկրարքառ ու(ու)։ Իսկ թէ ինչո՞ւ մեր այրենարանի մեջ ու(ց) պարզ ձայնավորի համար առանձին նշանագիր չի ստեղծված, այլ միենույն ու երկտառով է նշանակված, դրա պատճառն այն է, որ մեր այրենարանը հունականի հետևողությամբ է կազմված, իսկ հունական այրենարանի մեջ նև միննույն երկտառ ձևն է գործածվում թէ ու(ց) հնչյունի համար և թէ ու(ու) երկրարքառի համար։ Ս. Մեսրոպը մեր այրենարանի մեջ ու(ց) ձայնավորի համար, հունարենի հետևողությամբ, նշանակել է ու երկտառ նշանագիրը, որ արմատական բաղաձայնից առաջ իբրև երկրարքառ է ծառայել, իսկ բառի վերջում և բառի մեջ ձայնավորից առաջ իբրև պարզ ձայնավոր ու(ց)։ Թէ վերոհիշյալ դեպքում ու երկտափակի հնչյունն եղել է ու(ց) պարզ ձայնավոր և ոչ երկրարքառ ու(ու), այդ երևում է նրանից, որ մինչդեռ ու-ն այդ դեպքում չի ենթարկվում նոր լեզվի մեջ երկրարքառի կրած փոփոխությանը (այսինքն չի դառնում ով, ինչպես աւ=ավ), ընդհակառակն, ենթարկվում է այն փոփոխությանը, որ ու(ց) ձայնավորն ունենում է ոչ միայն մեր լեզվի մեջ, այլև մեր լեզվին ցեղակից լեզուների մեջ» (Ս. Ա թ ե ղ յ ա ն ն ե ւ ն ե ր կ ե ր, հ. Հ, Երևան, 1985, էջ 305–306)։ Բերվածից պարզ հետևում է, որ ու երկտառը մաշտոցան դասական նշանադիր է, արտահայտել է իհն հայերենի թէ՝ ու պարզ հնչյունը, թէ ու երկրարքառը, իսկ արդի հայերենում սուլ ու պարզ հնչյունը, և ոչ մի նորաքուիս «գիտունի» իրավունք չի վերապահվում այն վտարել մաշտոցան դասական այրութենից։

գույն մեթոդների հիմքի վրա, նրա բանասիրական հետազոտությունների ոլորտներն առավել են ընդլայնվում և խորանում:

Ա. ԲԱՆԱԳԵՏՆ ՈՒ ԱՌԱՍՊԵԼԱԳԵՏԸ

Եվրոպական համալսարաններն ավարտելու հաջորդ իսկ տարրում՝ 1899 թ., Մ. Աբեղյանը հրատարակում է երկու մենագրություն՝ «Der armenische Volksglaube» և «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ»: Առաջինը նվիրված էր հայ ժողովրդական հավատալիքների գիտական համակարգմանն ու համեմատական հետազոտությանը, որ հայագիտության մեջ առաջին անգամ էր այդ մակարդակով կատարվում, իսկ մյուսում, դարձյալ պատմահամեմատական լայն տեսադաշտի վրա, հիմնավորապես վերաբննվում էին Մ. Խորենացու ավանդած հայոց դիցարանական-դյուցագնական առասպելներն ու հնագույն վեպի՝ Վիպասանքի, Տիգրանյան և Արտաշիայան վիպաշարերը ու հավատտվում դրանց առասպելաբանական խորագնա արմատները և ընդհանրությունները հին հնդեվրոպական ու սեմական ավանդությունների հետ, ապացուցվում դրանց աղբյուրագիտական վավերականությունը՝ ընդդեմ Գր. Խալաթյանցի և այլոց Պատմահոր ու նրա աղբյուրների նկատմամբ արտահայտած գերբննադատական միտումների:

Այս գույգ աշխատությամբ, փաստորեն, հիմք էր դրվում մեր ժողովրդական հավատալիքների, հնագույն առասպելների (Հայկի, Վահագնի, Արա Գեղեցիկի և Շամիրամի, Տորքի) և առասպելաբանական վեպի (Տիգրանի և Արտաշեսի վիպական ցիկլեր) գիտական ուսումնքներին, որոնք հետազոտում առավել ընդլայնվում և խորանում են հեղինակի գալիք աշխատություններում:

Թեմատիկայով այս աշխատություններին էր համամիտվում 1941-ին հրատարակած «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետող դիցուհու արձաններ» բանավիճային ուսումնասիրությունը, ուր, համոզիչ փաստարկներով հերքելով ձկնակերպ քարակոթողները չար վիշապ-դեմոնի արձաններ համարելու վարկածը (Մար, Ամիռնով, Պիոտրովսկի), Աբեղյանը փորձում է դրանք կապել հին հայոց սիրո և հեշտանքի դիցուհի՝ Աստղիկի պաշտամունքին: Անկախ այս կարծիքի գիտական արժանահավատությունից, էականն այն էր, որ Աբեղյանն այսուեղ հանգամանորեն քննում է Աստղիկ դիցուհու պաշտամունքի ընդհանուր արմատները, տեղակայրերը, առասպելները և բացահայտում նրա տեղն ու նշանակությունը հին հայոց ծիսապաշտամունքային համակարգում: Դրանով, մի նոր էջով ևս, համալրվում էր հայ հին դիցարանական-դյուցագնական առասպելների՝ հեղինակի զարգացրած նախորդ տեսությունը: Շարունակելով «Սասնա ծոեր» դյուցագնավեպի նկատմամբ իր նախընթաց շահագրգոռությունները՝ Մ. Աբեղյանը, վեպի բազմաթիվ նորահայտ պատումների հիման վրա, 1906–1908 թթ. սկզբում «Ազգագրական հանդեսում», ապա առանձին գրքով հրատարակում է «Հայ ժողովրդական վեպը» մենագրությունը, ուր հերոսավեպը դիտված ու քննված էր մեթոդաբանական նոր տեսանկյունից՝ պատմական մեկնարանությունների նորագույն մոտեցմամբ (Վս. Միլեր): Յուրովսանն ամփոփելով ու խորաց-

նելով իր և նախորդ հետազոտողների ճշմարիտ տեսակետները՝ Աբեղյանն այստեղ առաջ է քաշում և հետազոտում բանագիտական ու բանասիրական մի շարք նոր խնդիրներ, որոնք բացահայտում էին վեպի բուն էլուրյունն ու իմաստաբանությունը: Նախ՝ քննվում էին վեպի լայն տարածվածությունն ու համազային բնույթը, նրա գեղօգկական-ժողովրդական ոգին, ժանրային, գեղարվեստական հատկանիշները, ապա վեպում արտացոլված պատմաաշխարհագրական միջավայրը, տեղանունների և անձնանունների պատմական հիմքերը, առցիալ-պատմական ատաղձը, վիպական տարրեր խավավորումներն ու առասպելաբանական մոտիվները, իին ու նոր հավատալիքները, հայ գեղօգկական նահապետական կյանքի ու կենցաղի բնորոշ գծերը: Ամբողջությամբ վերառած՝ Ս. Աբեղյանի սույն մենագրությամբ մեզանում հիմք էր դրվում «Սասնա ծոեր» հերոսակեպի դասական ուսմունքին: Այս ուսումնասիրությունը կարևորվում էր նաև մեկ այլ առումով: Քննելով «Սասնա ծոեր» վիպական բաղադրությունը՝ Աբեղյանը նախ՝ հավաստում, ապա հիմնական գծերով վերականգնում է միջնադարյան հայ գրավոր ավանդության մեջ պահպանված (Ազաթանգեղոս, Բուզանդ, Սեբեոս, Հովհ. Սամիկոնյան) ժողովրդական երկու մեծ վեպերի՝ «Պարսից պատերազմ» և «Տարոնի պատերազմ», գոյությունն ու ամբողջականությունը, որը կարևոր նորություն էր հայագիտության մեջ: Աբեղյանն իր վերականգնած այս վեպերի և «Սասնա ծոերի» միջև բացահայտում է վիպական սերտ աղերսներ ու ապացուցում, որ «Սասնա ծոերը» իր հերոսներով և հիմնական միջադեպերով «Պարսից պատերազմ» իին վեպի վիպական կերպափոխումն է՝ կատարված հետագա դարերի պատմական անցուղարձերի խոր ազդեցությամբ: Մյուս կողմից, «Սասնա ծոերի» առասպելաբանական բաղադրիչները քննելիս՝ նա ցույց է տալիս, որ վերջիններս սերում են Խորենացու հալորդած «Վիպասանք» առասպելաբանական վեպից, այն էլ միևնույն ավանդական հերթականությամբ:

Այս կերպ Աբեղյանը վիպական ժառանգականության սերտ կապեր է բացահայտում «Սասնա ծոեր» դրուցազնավեպի և հայոց իին ու հնագույն վիպական ավանդության միջև, որը հետազուում առավել զարգացնում, ընդլայնում, խորացնում է և նոր խնդիրներով համալրում 1930-ական թվականներին շարադրված «Հայ վիպական բանահյուսություն» մեծածավալ աշխատության մեջ: Այստեղ յուրատեսակ ամփոփելով իր նախընթաց հետազոտությունների արդյունքները՝ Աբեղյանը դրանք ենթարկում է միասնական համակարգման ու վերամշակման և ստեղծում հայ վիպական բանահյուսության պատմատիպաբանական զարգացման իր հիմնարար տեսությունը, որը նոր խոր էր հայագիտության մեջ:

Նույն կերպ, շուրջ 40 տարիների տքնաջան աշխատանքով Ս. Աբեղյանը հիմնովին մշակում և համակարգում է հայ քնարական բանահյուսության իին ու նոր ժառանգությունը և փաստական վիթխարի նյութի հետազոտման հիման վրա ստեղծում ժողովրդական իին ու նոր երգերի տեսական ուսմունքները:

<sup>5</sup>Տե՛ս Ս. Աբեղյան. Երկեր. հ. Ա, Երևան, 1966:

*Տակավիճական պարագաներին՝ 1904 թ., Մ. Արեդյանը հրատարակում է «Ժողովրդական խաղեր» խորագրով մի ամբողջական ուսումնասիրություն՝ նվիրված զեղջական սիրո փոքրածավալ երգերի՝ խաղիկների, ժանրային-տիպարանական, կառուցվածքային, զեղարվեստական ու տաղաչափական հատկանիշներին, որով մեզանում սկիզբ էր դրվում այդ ամենասիրված ու տարածված երգատեսակի բանասիրական-բանագիտական տեսությանը: Հետագա տասնամյակներին նա զբաղվում է այդ երգերի համահավաք ժողովածուի համալրման, կազմման ու համակարգման աշխատանքներով, որ նախաձեռնվել էր դեռևս դարասկզբին՝ Կոմիտասի համագործակցությամբ: 1940 թ. նա հրատարակում է այդ համահավաքը «Ժողովրդական խաղիկներ» խորագրով, որն ընդգրկում էր այդ երգատեսակի հարուստ ժառանգությունը (շուրջ 40 հազ. երգ՝ տարբերակներով հանդերձ): Օժողված ներածական ընդարձակ ուսումնասիրությամբ: Վերջինիս հիմքում ընկած էր 1904 թ. հետազոտությունը՝ համալրված նոր գլուխներով, մասնավորապես նվիրված խաղիկների բովանդակության ու թեմատիկայի խնդիրներին:*

*1931-ին տպագրված «Հին գուսանական-ժողովրդական երգեր» դասական մենագրությամբ, Մ. Արեդյանն անդրադառնում է հայ հին ժողովրդական քնարերգության լավագույն նմուշների՝ հայրենների, բանասիրական մանրակրկիտ քննությանը: Հանգամանորեն քննելով միջնադարից գրավոր ավանդված հայրենների, ինչպես նաև բանավոր ավանդությունից գրառված «անտունի» կոչված երգերի փոխհարաբերության, դրանց հեղինակների, ծագման հնության, գործառնական ոլորտների, լեզվի, տաղաչափության, պատկերավորման միջոցների, բովանդակավորած մոտիվների, տարբերակների խնդիրները՝ փաստական անառարկելի հիմնավորումներով ապացուցում է, որ հայրեններն ու անտունիները միևնույն երգերն են՝ «հայոց եին աշխարհիկ քնարերգության մնացորդները», որոնց հեղինակներն ու կատարողները հնում եղել են ժողովրդական արհեստավարժ երգիչ-գուսանները: Վերջիններս այդ սիրո և ուրախության երգերը կատարել են քաղաքներում, հարուստ քաղաքացիների և ազնվականների խնջույքներին, եեռու են կանգնած եղել եկեղեցուց և քրիստոնեական բարեպաշտությունից ու միշտ արժանացել հոգևորականների արհամարհանքին, նզովքին կամ հալածանքին: Այդ երգերը իրենց սիրված լինելու պատճառով, XIII դարից ի վեր գրառվել և մտել են տաղարանները, մյուս կողմից՝ պահպանվել ժողովրդի բերանին, փոփոխվել և հասել մեր օրերը «անտունի» անունով:*

*Այս ամենով մեկընդմիշտ հերքվում էր նաև հայրենները XVI դարի աշուղ Նահապետ Քուչակին վերագրելու անհիմն տեսակետը, որ, ցավոր, ցարդ շարունակում է գոյատեսել: Արեդյանի այս նոր հիմնարար տեսությամբ հայ ժողովրդական քնարերգության մեջ, փաստորեն, վերականգնվում էր մի ամբողջական պարբերաշրջան՝ հին գուսանական երգերի հարուստ քնարավառը, որը մինչ այդ մատենագրական բազմաթիվ ակնարկներից անկախ, հայագիտության համար մնացել էր անճանաչելի: Արեդյանի վերականգնման շնորհիվ՝ ստեղծվում է մի կապող օդակ մեր*

*ժողովրդական քնարերգության դարավոր զարգացման պատմական տարրեր փուլերի միջն:*

1930-ական թվականների սկզբներին Ս. Աբեղյանը Կ. Մելիք Օհանցանյանի ակտիվ համագործակցությամբ կազմում է «Սասնա ծռերի» մոտ հինգ տասնյակ պատումների գիտական համահավաքը, որը հետագայում հրատարակվում է 3 գրքով (1936, 1944, 1951 թթ.): Դրանով նա հայտիշության մեջ հիմք է դնում բանահյուսական հուշարձանների գիտական տեքստարանությանը, որին 1940-ին հաջորդում է նաև իր իսկ կազմած ժողովրդական երգերի գիտական համահավաքների հրատարակությունը («Ժողովրդական խաղիկներ», «Գուսանական-ժողովրդական տաղեր. հայրեններ և անտունիներ»):

Ս. Աբեղյանի այս բազմամյա և մեծարդյուն աշխատությունների շնորհիվ, ընդամենը մի քանի տասնամյակի ընթացքում, հայ բանագիտական միտքք դուրս է գալիս իր խանձարուրային վիճակից, հասունանում, ձերբագատվում բանասիրական հարակից գիտությունների գերությունից, մտնում զարգացման սեփական մայրուղի և, իբրև առանձին գիտակարգ, ձեռք բերում իր սեփական նկարագիրն ու որակը:

#### Բ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԲԱՆՆ ՈՒ ՊԱՏՄԱԲԱՆԸ

Ս. Աբեղյանը գրականագիտական ասպարեզ է մտնում 1880-ական թվականների վերջերին նախ որպես գրական քննադատ: Հետևելով հայ գրաքննադատության ռեալիստական գեղագիտական սկզբունքներին՝ նա միանգամայն առողջ ու առարկայական չափանիշներով է գնահատում ժամանակի մի շարք գրողների ու բանաստեղծների երկերը, որոնցից առանձնանում են հատկապես Հովհաննես Շովիք, Թումանյանի, Ալ. Շատորյանի անդրանիկ ժողովածուներին տրված նրա ձշմարիտ գնահատականները, որոնք մարզարեական կանխատեսումներ դարձան հայ գրականության հետագա զարգացման ընթացքում:

Աբեղյանի տեսական-քննադատական հայացքների զարգացման մեջ նոր աստիճան է նշանավորում Եվրոպայում ուսանելու տարիներին (1895–97 թթ.) գրված «Գրական դպրոցներ» ծավալուն աշխատությունը: Վերջինս թեպես շարադրված էր Եվրոպական, հատկապես ֆրանսիական գրականության ամենաակնառու պատմաբանների ու տեսաբանների աշխատությունների հիման վրա, էլությամբ, սակայն ամփոփում ու տեսականորեն բացահայտում էր Աբեղյանի գրականագիտական համոզմունքները, որոնք հանգում էին ժամանակի տիրապետող գրական ուղղության՝ ռեալիզմի կենսական հիմունքների հավաստմանը:

Այս սկզբունքներով է Աբեղյանը հետազյում մոտենում ու հետազոտում հայ հին ու նոր գրականության պատմությունը և ստեղծում իր գրապատմական դարակազմիկ տեսական համակարգը:

1890-ականի վերջերին, ստանձնելով Էջմիածնի Գևորգյան ձեմարանի հայոց գրականության ուսուցչի պաշտոնը, Աբեղյանն իր դասախոսություններում աստիճանաբար մշակում է հայ գրականության պատմության մի ինքնատիպ դասընթաց, որը հետազյում ընկնում է նրա ուսումնասիրությունների հիմքում: Առաջին արդյունքն է դառնում 1908–1909 թթ. «Ա-

րարատ» ամսագրում հրատարակած «Ուրվագծեր 19-րդ դարու Հայոց գրականության պատմությունից» աշխատությունը՝ նվիրված հայ նոր գրականության սկզբնավորման ժամանակի և XIX դարի առաջին երեսնամյակի գրաքար գրականության նորոգ քննություններին: Նորությունն այն էր, որ բնորոշ գծերով ուրվանկարելով հայ նոր գրականության հիշյալ երեսնամյակի զարգացման ընթացքը իր նշանավոր ներկայացուցիչներով (Ա. Բագրատունի, Հովհ. Վանանդեցի, Հ. Ալամդարյան), Մ. Աբեղյանն այն դիտում է իբրև միջանցիկ օղակ նախորդ երկու հարյուրամյակների գրաքար գրականության և XIX դարի հայ նոր աշխարհաբար գրականության միջև, երբ հինն աստիճանաբար տեղի է տալիս նորին, ձեռք բերում իր նորօրյա գրեթե բոլոր էական թեմաներն ու հատկանիշները:

Հայ նոր գրականության պատմության հարցերին Մ. Աբեղյանը մի վերջին անգամ անդրադառնում է 1912 թ.՝ Հովհաննես Հովհաննիսյանի գրական դիմանկարում, ուր գրապատմական ճշմարիտ դիրքերից արժեքավորելով բանաստեղծին որպես հայ նոր բանաստեղծության «առաջին իսկական մաքուր քնարերգուի», նա գեղագիտական նուրբ քննություններով բացահայտում է նրա պոեզիայի արժանիքներն ու ստեղծած այն ավանդույթները, որոնք հետազոտում օրինակելի դարձան և առավել խորացան, կատարելազործվեցին ու համալրվեցին այլ բանաստեղծների կողմից:

Հայ հին գրականության խնդիրները Աբեղյանի հատուկ հետազոտություններին են արժանանում XX դարասկզբի տասական թվականներից սկսած և այնուհետև մնում են անբաժան հեղինակից մինչև նրա արգասավոր կյանքի արևամուտը:

Առաջինն այդ ուղղությամբ դառնում է 1912-ին տպագրված «Շարականների մասին» մենագրական ուսումնասիրությունը՝ նվիրված մեր հին հոգնոր երգերին: Այստեղ Աբեղյանը հայ եկեղեցական մշակույթի պատմության տեսադաշտի վրա քննում է հայ հոգնոր երգերի ծագումն ու զարգացումը, բացահայտում դրանց գաղափարական, տիպաբանական, գեղարվեստական հատկանիշները, գործառնական նպատակներն ու խնդիրները, լույսի և արեգակի պաշտամունքի մոտիվների կապը հին հեթանոսական (միհրական) օրիններգությունների հետ: Հավաստելով հանդերձ մեր հին բանաստեղծության զարգացման գործքնացում շարականների տեղը իբրև պատմական մի ամբողջական շրջափուլի, իբրև հին բանաստեղծության առաջին արտահայտության, Աբեղյանը միաժամանակ նշում է, որ դրանք իրենց սուրբքային բնույթի և հետապնդած եկեղեցական նպատակների պատճառով վերջնականն ու բնորոշը չդարձան հայ բանաստեղծության համար: Վերջինիս ճշմարիտ բանաստեղծական սկզբնավորող դառնում է Գրիգոր Նարեկացին, որին էլ Աբեղյանը նվիրում է իր հաջորդ մեծարժեք հետազոտությունը՝ «Մ. Գրիգոր Նարեկացի» խորագրով (1916 թ.): Նարեկացու պոեզիան հակադրելով հին հոգնոր բանաստեղծությանը՝ Աբեղյանը գտնում է, որ «մինչ շարականները գուրել են ինքնուրույնությունից և կյանքից ու բնությունից, այժմ մի իսկատիպ բնարերգություն է առաջ զայխս», որի մեջ «հակառակ ճգնավորական մոայլ ոգուն», իրական կյանքն ու բնությունն է բանաստեղծության

նյութ ու պատկեր դառնում: Նարեկացու պատմական մեծ առաքելություններից է նաև այն, որ նա բանաստեղծությունը դուրս է բերում իր սառն ու անկենդան վիճակից և դարձնում անհատական անկեղծ ներշնչման առարկա և առաջին անգամ մեր բանաստեղծության մեջ կայուն մոտիվ է դարձնում կնոջ սերը, նրա անձի ու արտաքին հրապույրների գովքը: Այստեղ Աբեղյանը հանգում է գրապատմական երկու խիստ կարևոր հետևողական առաջին գովազդում՝ «Սատեան ողբերգութեանը» բնույթով մոտենում ապաշխարության և «Ողորմես» կոչված շարականներին՝ դառնալով դրանց «կատարելատիպր... միայն ինքնահատուկ ձևով»: Մյուսն այն է, որ Աբեղյանը, առաջին անգամ հայ գրականագիտության մեջ, Նարեկացուն դիտում է նոր տեսանկյունից՝ դեռևս եվրոպական վերածննդից շատ առաջ իբրև վաղ վերածննդի ուղղությունն ու գաղափարները մեր բանաստեղծության մեջ արմատավորողի: Այս տեսակետը, առավել ընդլայնված ու խորացված, նա զարգացնում է հաջորդ իսկ տարին (1917 թ.) հրատարակած «Հնդկանուր տեսություն հայոց հին բանաստեղծության» ուրվագծում: Վերջինս տեսական այն հաստատուն հիմքն էր, որի վրա ապագայում բարձրացավ Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմությունը»: Այստեղ ուրվագծիում էին հայ բազմադարյան գեղարվեստական գրականության պատմական զարգացման հիմնական փուլերը՝ սկսած հայ էթնոսի ձևավորման վերաբերյալ եղած առասպելապատմական բանահյուտությունից, վերջացրած միջնադարի վերջին բանաստեղծ Նաղաշ Հովնաթանով: Հայ բանաստեղծության ծագումն ու զարգացումը դիտվում ու քննվում էր հայ ժողովրդի հազարամյա պատմաքաղաքական, սոցիալ-մշակութային կյանքի լայն տեսադաշտի վրա, գրական իրողությունների փոփոխությունները մեկնաբանվում էին կյանքում կատարվող պատմահասարակական և գաղափարաբանական կարևոր տեղաշարժերով: Այստեղ, առաջին անգամ հայագիտության մեջ, եղակետ ունենալով գրականության մեջ անդրադարձած հասարակական ոգին ու աշխարհայեցությունը, վերաբննվում և վերաիմաստավորվում էր XI-XVII դարերի հայ գրականությունը, իբրև գրական զարգացման մի ամբողջական պատմաշրջան: Աբեղյանն այն դիտում է մեկնաբանում է որպես հայկական ինքնուրույն վերածննդի գրականություն, որը թոթափելով նախորդ շրջանի կրոնական ոգին, բնույթով դառնում է հեթանոսականի վերածնություն՝ աշխարհիկ ոգու վերջնական հաղթանակով: Սա մի նոր տեսություն էր հայագիտության մեջ, որն առավել ճշգրտվում ու խորացվում է Աբեղյանի կողմից հետազ մի շարք այլ աշխատությունների և մասնավորապես «Հայոց հին գրականության պատմության» մեջ<sup>6</sup>:

<sup>6</sup> Ա. Աբեղյանի հավաստած հայկական ինքնուրույն վերածնունդը իր ծագմամբ ու գաղափարական ազդակներով զգալապես տարբերվում էր եվրոպական վերածննդից, առաջին հերթին իր ազգայնությամբ: Եթե եվրոպականը արդյունք էր անտիկ դարաշրջանի գրականության, արվեստի, փիլիսոփայության սկզբաղյուրների, ծանոթացմանն ու դրանց գաղափարների վերածնմանը, ապա հայկականը առաջին

Նույն 1917-ին, Թիֆլիսում Մ. Աբեղյանը հրապարակային դասախոսություն է կարդում հայ միջնադարյան առակների մասին, որի վերամշակված տարբերակը հրատարակում է 1935-ին՝ «Հայոց միջնադարյան առակներն և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ» խորագրով։ Այսուեղ, միջնադարյան արձակի այդ գողտրիկ մանրապատումներում, գրականագետի և պատմաբանի նրբատեսությամբ, Աբեղյանը բացահայտում է դարաշրջանի սոցիալ-բարոյական կյանքի զեղարվեստական բազմակողմանի արտացոլումները, միաժամանակ նորովի գնահատում առակների գրապատմական արժեքը, ի լրումն հայկական վերածննդի իր տեսության։ «Առակները դառնում են մի տեսակ միջոց ժողովրդական տարբերը մեր հին գրականության մեջ մտցնելու, և դրանց միջոցով մեր գրականությունը հետզհետեւ մոտենում է ժողովրդին, ենթարկվում աշխարհիկ հոսանքին»<sup>7</sup>։

Հայ հին գրականության տարբեր հեղինակների և իրողությունների նկատմամբ Աբեղյանի նորանոր մտահանգումները դրսուրվում են «Մէսուրոց Մաշտոցը և հայ գրականության սկիզբը», «Վերածնությունը հայոց հին գրականության մեջ» (1941 թ.), «Կյանքի և աշխարհայեցողության փոփոխությունը X դարի վերջերում և XI դարի սկզբներում իբրև հիմք հայոց հին գրականության վերածնության շրջանի» (1943 թ.), «Հովհաննես Սարկավագ վարդապետ» (1944 թ.) մեծարժեք ուսումնասիրություններում։

Ի վերջո, այդ բոլոր հետազոտությունների արդյունքների ամփոփումն է դառնում Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» երկիսուրոց աշխատությունը (1944, 1946 թթ.): Ելնելով հայագիտության նվաճումներից, ընդհանուր գրականության և մշակույթի պատմության փորձից՝ Մ. Աբեղյանը հայ հին գրականության բազմադարյան պատմությունը ենթարկում է տեսական կուր համակարգման, ելակետ ընդունելով հայ բանաստեղծական մուսածողության պատմական զարգացման փաստերն ու օրինաչափությունները։ Այդ իմաստով նա, ի տարբերություն հայ հին գրականության նախորդ պատմաբանների, հին մատենագրությու-

---

հերթին հետևանքն էր հայ հեթանոսական զվարք աշխարհիկ ոգու վերածնման, որի հիմնական կրողը հայ հին ու հարուստ բանահյուսությունն էր։ Այն հենց սկզբից պատնեշվելով՝ նոր կրոնական բանաստեղծությունից, ժողովրդական բանավոր ավանդությամբ շարունակում է զարգացման իր ինքնուրույն ձանապարհը, մինչև որ X-XI դարերում, կյանքի և աշխարհայացքի փոփոխման հետևանքով՝ կրկին ներթափանցում է գրականության մեջ և հիմնովին վերափոխում վերջինիս թեմատիկան ու գաղափարները։ Աբեղյանի տեսության այս ազգային յուրահաստկությունը չըմբռնելու, այն եվրոպական վերածննդի հետ շփորելու, երթեսն էլ մարքսիստական պատմագիտության դոգմաներով առաջնորդվելու հետևանքով՝ այն լայնորեն չընդհանրացավ՝ մերօրյա հայ պատմագիտության, մասսամբ և գրականագիտության մեջ։ Իսկ այլով. Վ. Զալդյանը, Հայկական վերածննդին նվիրած իր աշխատության մեջ (տե՛ս Արմենский ренессанс, Մ., 1963, նույնը՝ հայերեն. Երևան, 1964) անզամ չի հիշատակում այդ տեսության հիմնադրի անունը, լուելյան այն վերագրելով իրեն։ Բրականում, Աբեղյանի Հայկական վերածննդի այս տեսությունը, որ մակարերված էր հեղինակի հայ բանահյուսության, գրականության, լեզվի, պատմության բազմամյա հետազոտությունների արդյունքներից, նոր լուս է սփոռում ոչ միայն հայ միջնադարյան գրականության, այլև մշակույթի պատմության մեկնաբանման կարոտ շատ խնդիրների ու իրողությունների ճիշտ իմաստավորման և գնահատման վրա։

<sup>7</sup> Մ. Աբեղյան. Հայոց միջնադարյան առակներն... Երևան, 1935, էջ 19.

նից առանձնացնում և հետազոտության է ենթարկում սուկ գրական-գեղարվեստական հոլշարձանները և բնույթով դրանց աղերսվող պատմագրական ու այլ կարգի երկերը: Առարկայի այս նոր բմբոնումն էլ բերում էր հետազոտվող նյութի միասնականության և օրինաչափությունների ճիշտ սահմանման: Այս մոտեցմամբ էլ նա գրական-գեղագիտական խոր ու համակողմանի վերլուծման և գնահատման է ենթարկում հին հեղինակների երկերը, բանահյուսական գրավոր հոլշարձանները ու դրանց մեջ արտացոլված պատմական իրականությունից և հիմնական գաղափարաբանությունից ելնելով՝ սահմանում գրական դարաշրջանների էական առանձնահատկությունները: Նման ընդհանրացումներով է Աբեղյանը պարբերացնում հայ հին գրականության զարգացման պատմաշրջանները, հակառակ գրականության նախորդ պատմաբանների պարբերացման ձևական սկզբունքների: Այսպես. հին գրականության առաջին, անգիր շրջանը (նկատի առնելով այս շրջանի բանահյուսության մեջ պատմական իրականության գեղարվեստական ընկալման և անդրադարձման եղանակը)՝ Աբեղյանը կոչում է «Նախնական առասպելապատմական բանահյուսություն»: Երկրորդ շրջանը (V-X դդ.) կոչում է «Եկեղեցաքաղաքական մաքառում մաքառում գրականություն», նկատի առնելով նրանում անդրադարձած պատմական իրականությունն ու գաղափարական հիմնական միտումները, իսկ երրորդ շրջանը (XI-XVII դդ.), ինչպես արդեն տեսել ենք, անվանում է «Վերածնության գրականություն», հաշվի առնելով պատմական իրողություններն ու գրականության մեջ աշխարհիկ ոգու վերածնման միտումները:

Մ. Աբեղյանը մեծ վաստակ ունի նաև հայ հին գրական հոլշարձանների բնագրերի գիտական հրատարակության բնագավառում: «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ» (1898-99 թթ.) ուսումնասիրության կապակցությամբ Մ. Աբեղյանը հատուկ հետազոտության է ենթարկում Էջմիածնի մատենադարանի Խորենացու «Հայոց պատմության» տասնութ ձեռագրերը: Արդյունքներն այնքան ակնհայտ էին ու շոշափելի, որ նա 1901-ին Սեթ Հարությունյանի աշխատակցությամբ ձեռնարկում է Պատմահոր «Հայոց պատմության» համեմատական բնագիրը կազմելուն: Այս նախաձեռնությունը համընկնում է մի շատ կարևոր իրադարձության: 1904 թ. վերջերին Ստ. Մալխասյանցի ձեռնարկությամբ և մի խումբ հայագետների մասնակցությամբ հիմք է դրվում «Պատմագիրք հայոց» քննական-բաղդատական բնագրերով մատենաշարի հրատարակությանը: Խորենացու «Հայոց պատմության» քննական բնագրի կազմումը, ահա, ընդգրկվում է այս մատենաշարի մեջ:

Խորենացու քննական բնագիրը կազմված էր 35 ձեռագիր ու տպագիր օրինակների բաղդատությամբ, օժտված տարրնթերցվածներով, ծանոթություններով, գիտական ընդարձակ առաջարանով, ուր տրված էր Խորենացու «Պատմության» տպագիր ու ձեռագիր օրինակների նկարագրությունը, ձեռագրերի դասակարգման խմբերն ու արդյունքները, բնագիրը կազմելու հանգամանքները: Բացի այդ, բնագրին նախորդում էր նաև «Պատմության» տպագրությունների, թարգմանությունների, ուսումնասի-

բությունների մանրամասն մատենագիտությունը, վերջում նաև՝ անվանացանկը:

Խորենացու «Պատմության» քննական-բաղդատական այս բնագիրը հրատարակվում է Թիֆլիսում, 1913 թ. «Պատմագիրք հայոց» մատենաշարով և դառնում հայ գիտաքննական տեքստաբանության զուխզործոցներից:

Մ. Աբեղյանի շահագրգությունը հին պատմագիրների բնագրերի նկատմամբ սուկ Խորենացիով չի ավարտվում: 1940 թ. Մեսրոպ Մաշտոցի մահվան 1500-ամյակի առթիվ՝ «Հայպետհրատը» նրան հանձնարարում է Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի աշխարհաբար թարգմանությունը: Մակայն զործը սկսելուց առաջ հարկ է զգացվում բնագրի մեջ ուղղումներ կատարել և որոշ մութ տեղեր պարզել, որի համար անհրաժեշտ էր Կորյունի երկի ձեռագրերի բաղդատությունը: Մատենադարանի զիտաշխատող Հովհաննես այն բաղդատելով Վենետիկի 1894 թ. տպագիր օրինակի հետ՝ կազմում է Կորյունի երկի քննական-բաղդատական բնագիրը, որից էլ կատարում է դրա աշխարհաբար բարձրորակ թարգմանությունը: Ստացվում է մի հրատարակություն, որի մի կողմում դրված է գրաբար քննական բնագիրը այլրնթերցվածներով, իսկ մյուս կողմում՝ ճշգրտված բնագրի աշխարհաբար թարգմանությունը: Աշխատությունն օժտված է հարուստ ծանոթագրություններով, հատուկ անունների ցանկով և բովանդակալից առաջարանով. այն լույս է տեսնում Երևանում 1941-ին:

Այդպես, հայ գիտական տեքստաբանության պատմության մեջ առաջին անգամ Մ. Աբեղյանի շնորհիվ հրապարակ է գալիս Կորյունի «Վարք Մաշտոցի» քննական-բաղդատական բնագիրը, որը հետագայում ունենում է մի քանի վերահրատարակություններ:

Գ. ԼԵԶՎԱԲԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԳԵՏՆ ՈՒ ՏԵՐՄԻՆԱՇԽԱՐԱՐ  
ԲԱՌԱՐԱՆԱԳԻՐԸ

Տեսական-մեթոդաբանական նորությամբ և առարկայի գիտական համակարգումների թարմությամբ են հատկանշվում Աբեղյանի լեզվաբանական-քերականագիտական ուսումնասիրությունները, որոնք գերազանցապես վերաբերում են մեր նոր լեզվի, մասնավորապես արևելահայ աշխարհաբարի խոր և համակողմանի սիստեմավորմանն ու հետազոտմանը: Պատմական առումով՝ Մ. Աբեղյանի լեզվաբանական գործունեությունը շարունակությունն ու ավարտը եղավ գրապայքարի, որ բորբոքվել էր նախորդ հարյուրամյակի կեսերին գրաբարի և աշխարհաբարի կողմնակիցների միջն, իսկ գիտական առումով՝ ընդհանուր լեզվաբանության գիտական նոր նվաճումների, նոր մեթոդների և ուղղությունների լույսի տակ՝ նորովի ու հիմնովին հետազոտության ենթարկել գրական աշխարհաբարը և վերջինիս նոր ոգուն համապատասխան ազատել լեզուն հին ու հնացած կերպերի և մոտեցումների կաշկանդիչ կապանքները:

*թից: Աբեղյանի լեզվաբանական անդրանիկ ուսումնասիրություններն, ինչպես տեսանք, հիմնականում վերաբերում էին նոր հայերենի ձևական խնդիրներին, մասնավորապես ուղղագրությանն ու շեշտադրությանը:*

*Սկսած XIX դարի երկրորդ կեսերից մասնաւում և հրապարակային ելույթներում առաջ են քաշվում նոր հայերենի ուղղագրության բարելավման տարրեր առաջարկներ, որոնցով ուղղագրության խնդիրը ձեռք է բերում հասարակական նշանակություն:*

*Աբեղյանը հայ իրականության մեջ առաջինն է դառնում, որ ուղղագրության վայրիվերու անհատական փոփոխությունների խառնաշփռության դեմ լայնքով ու խորքով առաջարկում է ուղղագրության կանոնավորման ու բարենորոգման հարցը և դրան պարտադիր պաշտոնական, համազգային բնույթ տալու խնդիրը: Նա ուղղագրական բարեփոխությունները դիտում է ոչ սուկ գիտահնչյունաբանական մի իրողություն, այլ որպես հասարակական կարևոր երևույթ, որպես «մի միջոց հայերի մեջ հայ գրագիտությունը, որով և հայ լեզուն զորացնելու համար: Իսկական նպատակը՝ գրում է նա, – ահա այս վերջինն է»<sup>8</sup>:*

*Այս խնդիրը նա առաջ է քաշում 1913 թ. հոկտեմբերի 14-ին Էջմիածնում հայ գրերի գյուտի 1500-ամյա համազգային մեծ հորելյանի հանդեսի ժամանակ կարդացած «Մեր ուղղագրության մասին»<sup>9</sup> գեկուցման մեջ: Այստեղ նա զարգացնում է ու գիտականորեն խորացնում 23 տարի առաջ «Նոր-դար»-ում տպագրած ուղղագրական բարեփոխման մասին իր հոդվածների տեսական դրույթները:*

*Առաջարելով մեր ավանդական ուղղագրության մեջ կատարվելիք փոփոխությունների հարցը՝ Աբեղյանն այն համարում է դժվար ու կնճռոտ, բայց և խիստ անհրաժեշտ, քանզի այն «խևկապես շարունակությունն ու մնացորդն է գրաբարի և աշխարհաբարի մեծ վեճի, որ դեռ վերջնական բավարար լուծում չի ստացել մտքերի մեջ ընդհանրապես»: Եվ եթե աշխարհաբարը հաղթանակել է արդեն գրաբարի դեմ ձևարանության և շարահյուսության հարցում, ապա այն դեռևս մնում է կաշկանդված գրաբարի ուղղագրությամբ, «որ պակաս նշանակություն չունի մի նոր գրական լեզվի համար, քան ձևարանությունն ու շարահյուսությունը»<sup>10</sup>:*

*Աբեղյանն այստեղ բավարարվում է սուկ ուղղագրության նվազագույն բարեփոխությունների առաջարկությամբ (բաղաձայնների իին ուղղագրությունը թողնել նույնությամբ, բարեփոխման ենթարկել Յայնավորի՝ օ, ու, և ուղղագրությունը, որ գրվում է հինգ տառով՝ ն, է, ո, ո, ւ), թեպետ ինքը կողմնակից էր առավել արմատական բարեփոխումների:*

*Տարիներ անց, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու հենց սկզբից, երբ օրախնդիր հարց է դառնում ընդհանուր գրագիտության տարածումը, Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատի կողմից ուղղագրության բարեփոխման գործը հանձնարարվում է Մ. Աբեղյանին: Վերջինս 1913 թ. արած առաջարկությունների վրա հավելում*

<sup>8</sup> «Արարատ», Վաղարշապատ, 1913, էջ 1064–1065:

<sup>9</sup> «Արարատ», 1913, № 11, 12:

<sup>10</sup> «Արարատ», 1913, էջ 1052:

է ևս մի քանիսը և զեկուցման կարգով ներկայացնում հասարակական քննարկման։ Այնուհետև Աբեղյանի առաջարկներն ամրողությամբ ներկայացվում է Ժողկոմիտրիդին, որը 1922-ի մարտի 4-ին հատուկ դեկրետի ձևով հաստատվում և պարտադրվում է գործադրել ամենուրեք։ Աբեղյանը, այդպիսով դառնում է հայոց լեզվի արդի ուղղագրության հիմնադիրը։ 1940 թ. կառավարությունը որոշ չափով բարելավում է Աբեղյանի այդ ուղղագրությունը, որն այլ քան չէր, քան 1921-ին նույն Աբեղյանի առաջարկած երկրորդ, մասամբ և երրորդ աստիճանի ուղղագրական փոփոխությունների իրագործումը։

Աբեղյանի մշակած քերականագիտական նոր համակարգերն ու տեսությունները սկիզբ են առնում XX դարի սկզբներից, այսինքն՝ նրա զիտամանկավարժական գործունեության երկրորդ շրջանում։ 1906 թ. լույս է տեսնում U. Աբեղյանի «Աշխարհաբարի քերականությունը», որն, անկախ դասագրքային բնույթից, արևելյան աշխարհաբարի քերականագիտական մի նոր լուրջ հետազոտություն էր։ Այդ աշխատությամբ Աբեղյանը հանդես է գալիս հայ քերականագիտության մեջ որպես իսկական նորարար։ Նորությունն ամենից առաջ կայանում էր քերած քերականագիտական համակարգը։ Հեղինակը լեզվաբանական նորագույն հետազոտությունների լույսի տակ նորովի է վերաբնում արդի հայերենի քերականական խնդիրներն ու իրակությունները և դրանք համակարգում է բոլորվին նոր մոտեցումով։ «Երբեք նորաձևության փափազը չէ եղել մեզ առաջնորդ այս փոփոխությունների համար, – գրում է նա, – այլ միմիայն ճշտության և կատարելության ձգտումը և այն միտքը, թէ ամեն լեզու ընդհանուր քերականության հետ ունի և յուր առանձնահատուկ քերականությունը»<sup>11</sup> (ընդգծումները մերն են. – Ս. Հ.):

Ճշտություն, կատարելություն և հայոց լեզվի քերականական առանձնահատկություն, – ահա Աբեղյանի հայոց լեզվի հետազոտության առաջնորդող սկզբունքները, որոնց դաշտական նա ստեղծում է հայ քերականագիտության իր նոր ուղղությունը։ Ինչպես արդարացիորեն դիտված է, Աբեղյանը «Զարակայտականությունը և ձևաբանությունը վերցնում է որպես մի միասնական ամբողջություն, նրանց կենտրոնում դնելով բայլ»<sup>12</sup>։ Նա իր քերականագիտական համակարգը կառուցում է ելնելով իտոքի (իմանալիադասության) նկատմամբ բառերի կատարած պաշտոններից։ Ըստ այդմ՝ բառերը բաժանում է չորս տեսակի. ա) իտոք կազմող բառեր կամ բայ, բ) իտոք լրացնող բառեր կամ լրացում, գ) իտոքեր և լրացումներ կապող բառեր կամ զոդ, դ) իտոքից դուրս մնացող բառեր կամ ձայնարկություն։ Աբեղյանը իտոքի մասերի մեջ կենտրոնական տեղը հատկացնում է բային, այն ճիշտ մեկնակետով, թէ «ամենայն բայ մենակ կազմում է մի իտոք», իսկ «առանց բայի իտոք չկա»<sup>13</sup>։ Եվ այդ այն պատճառով, որ բայը «միանգամից մի քանի զաղափար է միացած հայտնում», այսինքն՝ բայիմաստ, դեմք և թիվ։ Ուրեմն, ելակետը ընդունելով իտոքը, հետևաբար,

<sup>11</sup> Ս. Ա բ է դ յ ա ն. Աշխարհաբարի քերականություն. Վաղարշապատ, 1906, էջ 4:

<sup>12</sup> Ս. Դ ա ր ի բ յ ա ն. Ս. Աբեղյանի քերականագիտական ժառանգությունը. – «Գրական-բանասիրական հետախուզումներ»։ Երևան, 1946, էջ 151:

<sup>13</sup> Ս. Ա բ է դ յ ա ն. Աշխարհաբարի քերականություն, էջ 41:

խոսք կազմող բառը բայ, Աբեղյանը մյուս բառերը (իմա՝ խոսքի մասերը) քննում է ելնելով խոսքի մեջ բայի հետ նրանց ունեցած փոխհարաբերությունից: Աբեղյանն այդպիսով խոսքի մասերի ավանդական ուսմունքին հակառակ, հայ քերականազիտության մեջ ստեղծում է մի նոր համակարգ, որի կենտրոնն էր բայը իր ստորոգումներով: Աբեղյանի բայակենտրոն քերականազիտական համակարգը նորություն էր հայ լեզվաբանության պատմության մեջ. այն նորությունն էր նաև իր առանձին մասերով ու բաղադրիչներով: Աբեղյանը կատարելագործում, կուր ու միասնական համակարգի է վերածում աշխարհաբարի թեքման և բայական կառուցվածքի ուսմունքը, այն հարստացնելով քերականազիտական մի շարք նոր հասկացություններով: Հակառակ հայ քերականազիտության մեջ իշխող Ստ. Պալասանյանի տրամաբանական քերականության համակարգին ու ըմբռնումներին, ելնելով հայոց լեզվի պատմական, ձեւաբանական ու իմաստաբանական զարգացման միտումներից, ինչպես և լեզվի հոգերանական ընկալումներից, Աբեղյանն արևելյան աշխարհաբարի ձեւաբանության մեջ ընդունում է հինգ հոլով: Նա հոլովական համակարգից դուրս է թռողնում սեռականն ու հայցականն իբրև սեփական հոլովական չունեցող հասկացություններ: Բայերի կազմության մեջ Աբեղյանն առաջինը մեզանում մուծում է սոսկածանցավոր, բազմապատկական և պատճառական բայերի հասկացությունը, որը հետազայում իր իսկ կողմից վերաձելու էր բայսերի քերականական նոր կարգի ըմբռնմանը հայ քերականազիտության մեջ: Իսկ բայերի եղանակների մեջ բերում է ենթադրականի և հարկադրականի հասկացությունները:

Աբեղյանը բերում է նաև ժամանակի նոր հասկացություններ. եթե Պալասանյանը սահմանականի համար ընդունում էր հինգ ժամանակ, ապա Աբեղյանը դրանք հասցնում է իննի: Նոր ըմբռնումն ու մոտեցմամբ քննելով դերբայները, նախկին չորսի փոխարէն հայոց լեզվի համար ընդունում է յոթ դերբայ, ավելացնելով երեքը՝ անկատարը, վաղակատարը և հարակատարը (վերջին երկուսն իբրև անցյալ դերբայ): Աբեղյանը հիմնովին փոխում է տակավին զրաբարի քերականությամբ հարատնող աշխարհաբարի խոնարհման համակարգը՝ ըստ բայական լծորդությունների ստորաբաժանման և բայերի կանոնավոր խոնարհումները սիստեմավորում է ըստ անցյալ կատարյալի և հրամայականի վերջավորությունների, բաժանում խոնարհման երեք ձևերի (Ի, Ա, Ի–Ե):

Եվ, վերջապես, Աբեղյանը բերում է կապի և բայական կերպի հասկացությունները, վերջինս ըմբռնելով իբրև մի որոշ ժամանակակետի նկատմամբ բայի ցույց տված գործողության հատկությունը: Կենտրոնական քերականազիտական այն խնդիրները, որոնք հասկանալի պատճառով թեթևակի էին շոշափված «Աշխարհաբարի քերականության» մեջ, գիտական խոր ու համակողմանի քննության են ենթարկվում «Աշխարհաբարի հոլովները» (1908 թ.), «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» (1909 թ.), «Բայի եղանակներն արևելյան աշխարհաբարում» (1912 թ.) նրա հետագա ուսումնասիրություններում: Իսկ իր քերականազիտական ողջ ուսմունքն ու համակարգը առավել կատարելագործված ձևով Աբեղյանն ամփոփում է «Աշխարհաբարի շարադրություն» (1912 թ.) և «Հայոց լեզ-

վի տեսություն» (1931 թ.) ծանրակշիռ աշխատությունների մեջ: Դրանցում, ժամանակի լեզվաբանության վերջին նվաճումների լույսի տակ, Արելյանը զիտական խոր ու բազմակողմանի հետազոտության է ենթարկում ժամանակակից հայոց լեզուն գրեթե իր բոլոր էական բաղադրիչներով և դրանով իսկ հիմք դնում արդի հայերենի զիտական քերականությանը:

Արելյանն առաջինն է զիտական խոր ու մանրագնին հետազոտության ենթարկում արևելահայերենի հնյունաբանությունը, սահմանում նրա տեսությունն ու համակարգը: Ապա ուսումնասիրության է ենթարկում բառերի իմաստաբանությունը և, ենելով բառերի նշանակությունից, կատարում է բառակերպերի նոր դասակարգում: Գիտական բացարիկ խորությամբ են ուսումնասիրովում նոր հայերենի բառակազմության ձևերն ու օրինաչափությունները, բացահայտվում բառաբարդությունների և ածանցների տեսակներն ու կիրառությունները և, ինչպես արդեն նշվել է, բոլորովին նոր մոտեցմամբ է հետազոտվում հայոց լեզվի ձևաբանությունը, հատկապես հոլովումն ու բայական համակարգն առհասարակ:

Շարահյուսության բնագավառում Արելյանը հանդես է զայիս իբրև նոր հայերենի շարահյուսության զիտական մշակողն ու կատարելագործողը: Նա մշակում է հայոց լեզվի շարահյուսական բոլոր բմբոնումները, սահմանում կապակցության պարզ և բարդ բազմապիսի ձևերի շարահյուսական օրինաչափությունները:

Արելյանն իր քերականագիտական աշխատություններում և հատկապես «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ մեծ տեղ էր հատկացնում ոչ միայն զրական արևելահայերենին, այլև ժողովրդականակցական կենդանի լեզվին այն միանգամայն արդարացի համոզմամբ, որ մեր լեզվի ազգային առանձնահատուկ զգացողությունը դրսերվում է հենց ժողովրդականակցական կենդանի լեզվում, նրա կաղապարված բանաձևերի (առած-ասացվածք, երդում, անեծք և այլն) ձևահմատային կապակցությունների մեջ, և քերականություն հետազոտողը պետք է միշտ հետևի այդ դրսերումներին, որոնք հեռու են օտար քերականությունների ազդեցությունից և դրանց հիման վրա նա կարող է միանգամայն միշտ բացահայտել հայոց լեզվի բուն օրինաչափությունները:

Եվ Արելյանն ինքը վերակարգում է հայ քերականագիտական ավանդական համակարգը, այն վերջնականապես ազատում օտար քերականությունների ազդեցությունից և ստեղծում բուն հայերենին համապատասխան կուր ու միաննական քերականագիտական համակարգ:

Մ. Արելյանի հետազոտական տեսադաշտից դուրս չեն մնում նաև հայերենի զարգացման նախորդ երկու փուլերը՝ գրաբարը և միջին հայերենը, որոնք քերականական նորովի ուսումնասիրությունների են արժանանում «Գրաբարի համառոտ քերականության» մեջ (1907 թ.) և «Գուսանական ժամանակական տաղեր» (1940 թ.), «Հին գուսանական ժողովրդական երգեր» աշխատությունների առանձին հատվածներում:

«Հայոց լեզվի տեսությունը» թեպետ նվիրված էր արդի հայերենին, բայց շեշտար դնելով լեզվի անընդհատ շարժմանն ու զարգացմանը, Արելյանը հայոց լեզուն դիտում է իր ամբողջության մեջ, իբրև մեկ միասնա-

կան պատմական գործընթաց՝ իր զարգացման կոնկրետ շրջաններով, լեզվի յուրաքանչյուր պատմաշրջանի ձևափոխությունների և յուրահատկությունների հաշվառումով, լեզվական շրջաններ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է որոշակի օրենքներով կատարվող իր նախորդի ձևափոխությունը, որ գոյանում է լեզվական երևույթների հակառակ կողմերի մշտառի պայքարի, և վերջինիս հետևանքով իրականացող աստիճանական քանակական փոփոխություններից որակականին անցնելու միասնական օրինաչափությամբ: Այս է պատճառը, ահա, որ Աբեղյանի այս աշխատությունը մի սովորական քերականություն չէ և ոչ էլ լեզվի զարգացման մի ընդհանուր պատմական տեսություն, այլ ժամանակակիցից հայերենին նվիրված տեսական-քերականագիտական մի բարձրարժեք հետազոտություն, որն իր նմանը չունի ոչ անցյալի, ոչ էլ արդի հայ քերականագիտության մեջ:

Իր քերականագիտական ողջ ժառանգությամբ զուգահեռաբար օգտագործելով լեզվի հետազոտության նկարագրական և պատմական մեթոդները, Աբեղյանը մի կողմից ներկայացնում է արդի հայերենի քերականական ձևերի և իրողությունների դրական ամբողջական պատկերը, մյուս կողմից հետազոտում դրանց ծագումն ու զարգացումը իրենց անընդհատ շարժման ու փոփոխության մեջ: Աբեղյանն արևելահայերենի քերականությունը դուրս է քերում իր նորմատիվ դպրոցական վիճակից դեպի տեսական-փիլիսոփայական բարձունքներ և դառնում արդի արևելահայերենի գիտական քերականության ստեղծողը:

*Մ. Աբեղյանի լեզվարանական ժառանգության կարևորագույն բնագավառներից է բառարանագրությունը և հայերենի տերմինաբանության մշակումը:*

Տակավին իր գիտամանկավարժական գործունեության այզարացին՝ 1890-ական թվականների սկզբներին Աբեղյանը մտադրվում է կազմել հայոց լեզվի (բարբառային հայերենի) բացատրական բառարան: Գործը սկսում է հայ նոր գրականության սկզբնավորման հուշարձանից՝ Խ. Աբրվանի «Վերք Հայաստանի»-ից, մտադրություն ունենալով բառացանկում ընդգրկել հայ նոր գրականության և բանահյուսության մեջ եղած ժողովրդական հայերենի ամբողջ բառապաշարը: «Վերքից» հետո նա քարտագրում է Պ. Պողյանի «Կովածաղիկ», հետազոյում նաև իր կազմած «Ժողովրդական խաղիկների» բացատրության ենթակա բառերը, սակայն գործը դրանցով էլ ավարտվում է: Դատելով այդ նախնական աշխատանքներից՝ Աբեղյանի ծրագրած բառարանն ընդգրկելու էր բուն հայերեն ժողովրդական բառերն ու դարձվածները, իրենց գործածությունների գրական օրինակներով, դրանց տարածման ազգագրական շրջանների և բարբառային համապատասխան ձևերի պարտադիր նշումներով: Աբեղյանի տերմինաբանական և բառարանագրական հետազա գործունեությունը կենտրոնանում է մասնագիտական տերմինաբանական բառարաններ կազմելու վրա:

Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման և դատարանների ազգայնացման նախօրեին, Թիֆլիսի հայ փաստարանների միությունը («Հայփաստ») նախաձեռնում է շտագ կարգով կազմել և հրատարակել

ոռու-հայերեն իրավաբանական տերմինների առձեռն բառարան, որը զալու էր նպաստելու հայրենի երկրում ազգային լեզվով կատարվելիք դատավարություններին: Բառարանը դառնում է կոլեկտիվ աշխատանքների արդյունք, որին, իրավաբաններից բացի, մասնակցում են հայկաբաններ Ո. Աբեղյանն ու Ստ. Մալխասյանցը: Աբեղյանը դառնում է բառարանի առաջատար հեղինակներից: Բառարանը լույս է տեսնում Թիֆլիսում 1919 թ. և լեզվաշրջանառության մեջ է դնում բազմաթիվ նոր բառեր ու տերմիններ, որոնցից շատերը հետազայում կայուն տեղ գրավեցին հայոց իրավաբանական լեզվի բառապաշարում: Մեկ տարի անց Աբեղյանը իրավիրվում է աշխատելու Հայաստանի արդարադատության նախարարությունում՝ հայ իրավաբանական լեզուն հարստացնելու նպատակով: Այստեղ նրա իսկ զանքերով հիշյալ բառարանի բազմաթիվ տերմիններ ու բառեր, ինչպես նաև իր իսկ կողմից կազմած իրավաբանական մի շարք նորակերտ բառեր սկսում են կիրառվել գործնականում և շուտով լայն տարածում ձեռք բերում: 1920 թ. հունիսին Աբեղյանը նշանակվում է զինվորական ծառայողների ուսումնական դասընթացների վարիչ, իսկ հոկտեմբերին՝ Հայաստանի ռազմական նախարարության հանձնարարությամբ, նա սկսում է կազմել հայերեն լեզվով ռազմական հրամաններ ու հրահանգներ: Գործը հաջողությամբ գլուխ բերելու համար անհրաժեշտ էր մշակել հայերեն նոր ռազմական տերմիններ ու բառեր: Աբեղյանը ձեռնամուխ է լինում պատմական այդ շատ կարևոր ինդրի՝ հայոց լեզվի ռազմական տերմինաշխնության գործի իրականացմանը: Աշխատանքը տևում է մի քանի տարի: Իսկ երբ նոյեմբերին Հայաստանում հաստատվում են խորհրդային կարգեր, Հայաստանի ռազմական կոմիսար Ավիս Նուրիշանյանի հրամանով Աբեղյանին հանձնարարվում է կազմել ոռու-հայերեն և հայ-ոռուսերեն ռազմական տերմինների բառարան և այդ նպատակով նա կարգվում է ռազմկոմի անձնական բարտողար: Մի քանի տարվա լարված աշխատանքի և մինչ այդ իր ձեռքի տակ կուտակված փաստացի նյութերի հիման վրա նա ստեղծում է «Օռու-հայերեն ռազմական բառարան», որը լույս է տեսնում 1927 թ. և ընդգրկում էր շուրջ 17 հազար բառ ու դարձված: Բառարանի ամենաառաջին արժանիքն այն էր, որ դարերով պետական-ռազմական կյանքով շապրած հայ ժողովրդի աղքատիկ ռազմական բառապաշարը հարստանում էր հազարավոր հայեցի նոր բառերով ու տերմիններով:

Աբեղյանի բառարանի շնորհիվ, նախորդների և իր ստեղծած հազարավոր նոր բառեր ու տերմիններ դրվում են գործնական շրջանառության մեջ, և մեծամասնությունը մեկրնդմիշտ մուտք է գործում արդի հայերենի բառապաշարի ոսկե ֆոնդը: Մինչև Աբեղյանի բառարանի իրավաբակ գալը՝ հայ բառարանագրության պատմության մեջ իսպառ բացակայում էր ռազմական տերմինների որևէ բառարան: Աբեղյանն իր բառարանով դառնում է ոչ միայն հայ ռազմական տերմինաբանության կարգավորողն ու նորմավորողը, այլև բուն իմաստով նրա ստեղծողը: Այս էլ հենց Աբեղյանի պատմական մեծ ծառայությունն է հայերենի տերմինաշխնությանը:

Հայ տերմինաշխնության բնագավառում Աբեղյանի ծառայությունները սույն իրավաբանական և ռազմական տերմինաբանությամբ չեն սահմա-

նախակվում: Նա իր հետագա գիտական գործունեության ընթացքում եռանդագին մասնակցում է նաև հայերենի կերպարվեստի և բժշկական տերմինների մշակմանը: Դեռևս 1920-ական թվականների կեսերին, երբ Աբեղյանը ղեկավարում էր Հայաստանի գիտությունների և արվեստի ինստիտուտը, իր առաջարկությամբ և զինավորությամբ, Գ. Լևոնյանի և Դ. Դեմիրճյանի հետ ձեռնարկում է կազմել «Գրաֆիկ արվեստների և քանդակագործության տերմինաբանական բառարան»<sup>14</sup>: Այն պարունակում էր շուրջ 2000 բառային միավոր ոուս-հայերեն թարգմանությամբ, հարյուրավոր նորակերտ բառերով, որոնց ճնշող մեծամասնությունը պատկանում է Ս. Աբեղյանին: Այն, անկախ իր որոշ թերություններից, մի ամփոփ ու արժեքավոր գործ է, հայերեն առաջին կերպարվեստի բառարանը, որը որոշ համալրումներից ու խմբագրումից հետո կարելի է լույս աշխարհ հանել:

Վերջին տերմինաբանական աշխատությունը, որին Աբեղյանը մասնակի հեղինակցություն է ունեցել՝ «Լատին-ոուս-հայերեն բժշկական բառարանն է» (1951 թ.):

«Լինելով ժամանակակից հայոց լեզվի մեծ մասնագետ, պրոֆ. Ս. Աբեղյանը հայոց լեզվի բառակազմության ոգուն հարազատ բազմաթիվ նորանոր բառեր ու տերմիններ է կազմել, վեր հանելով հայերենի բառակազմության հարուստ հնարավորությունները և օրինակ է ծառայել հայերենի բոլոր մասնագետների և բառարանագիրների համար:

Դեռ 1920-ական թվականներին պրոֆ. Ս. Աբեղյանը հիմնովին հերքեց ժամանակակից հայերենի մասին տարածված այն առասպելը, ըստ որի հայոց լեզուն անընդունակ է իր սեփական միջոցներով ստեղծելու հասարակական, քաղաքական, գիտական և տեխնիկական տերմինաբանություն: Այդ առասպելի հերքման փայլուն ապացույցներն են պրոֆ. Ս. Աբեղյանի կազմած և հայոց լեզվի մեջ մտած հազարավոր բառերն ու տերմինները»<sup>15</sup>, – այսպես է բնութագրել Աբեղյանի բառարանագրական-տերմինաշինական գործունեությունը մերօրյա անվանի բառարանագետ, լեզվաբան Աշոտ Սուրիփասյանը:

#### Դ. ՀԱՅ ՏԱՂԱԶԱՓՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆ ՈՒ ՏԵՍԱԲԱՆԸ

Ս. Աբեղյանին շահագրգորած հայագիտության հաջորդ և վերջին բնագավառը տաղաչափությունն է և հայ բազմադարյան բանաստեղծության տաղաչափական հարուստ ձեռների ու իրողությունների համակողմանի հետազոտությունը: Թեպետ հայ տաղաչափության իննդիրներին տարրեր ժամանակներում անդրադարձել էին զգալի թվով, անզամ անվանի ու հեղինակավոր բանասերներ (Ս. Բագրատունի, Ա. Այտրնյան, Կ. Տեր-Սահակյան, Ավ. Բահամբեյյան, Հ. Ճաղաբեղյան, Ա. Տիրոյան, Հ. Թիրյաքյան և ուրիշներ), սակայն այստեղ ևս չուշացավ անվանի հայագետի ծանրակ-

<sup>14</sup> Բառարանը ձեռագիր վիճակում պահպատ է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում:

<sup>15</sup> Տե՛ս Ս. Սուրիփասյանի «Օուս-հայերեն բառարանագրությունը սովետական իշխանության տարիներին» թեկնածուական ատենախոսությունը, էջ 79 (անտիպ):

շիր խոսքը և այն 1880-ական թվականներից ի վեր մարմնավորվեց Մ. Աբեղյանի տաղաջափազիտական տարրեր ուսումնասիրությունների և մասնավորապես «Հայոց լեզվի տաղաջափություն, Մետրիկա» 1933-ին տպագրված ծավալուն մենագրության մեջ: Աբեղյանը, հենվելով ժամանակի եվրոպական, հատկապես գերմանական բանասերների հետազոտությունների, նրանց կիրառած զիտական մեթոդների և տեսական արդյունքների վրա, մանրակրկիտ հետազոտության է ենթարկում հայերենի տաղաջափության հարուստ բազմադարյան ձևերը:

Ամենից առաջ Աբեղյանը պարզում է հետազոտվող առարկայի բնույթն ու հատկանիշները:

Տաղաջափության առարկան, ըստ Աբեղյանի՝ ուսումնավորն է, այսինքն՝ ոփթմական փոքր միավորներից՝ ոտքերից կազմված ոփթմական այն մեծ ամբողջությունը, որ կոչվում է չափած տող կամ կարգ: Հետևաբար՝ ուսումնավորն առարկան է, իսկ տաղաջափությունն այդ առարկայի՝ ուսումնավորների սկզբունքները հետազոտող զիտությունը<sup>16</sup>: Ուսումնավորի էական հիմքը ըստ Աբեղյանի՝ ոփթմն է, բնորոշ արվեստի շատ տեսակների, այդ թվում և բանաստեղծությանը: Բանաստեղծական ոփթմի հիմնական հատկանիշը համարելով երաժշտականությունը՝ Աբեղյանը տաղաջափական սկզբունքների ուսումնասիրության առաջին խնդիրը տեսնում է լեզվում երաժշտական ոփթմի առաջ զայռու երևույթի պարզաբանման մեջ: Երաժշտական ոփթմը նա դիտում է իրրե լեզվական իրողություն, լեզվին առանձնահատուկ երևույթ, ուստի և տաղաջափությունը համարում է լեզվի երաժշտականության տեսություն, իսկ նրա համակողմանի հետազոտությունն ինքնին դառնում է լեզվական ուսումնասիրություն: Աբեղյանը մերժում է տաղաջափությունը ուսումնավորներ հորինելու արվեստ համարելու ավանդական տեսակետը և գոնում, որ տաղաջափությունը լեզվական զիտություն է և կազմում է լեզվի ընդհանուր հնյունարանության հետազոտության մի մասը:

Հայոց լեզվի տաղաջափության ուսումնասիրությունն Աբեղյանն առաջ է տանում երեք հիմնական ուղղություններով. 1. տաղաջափության հիմունքների և տարրերի տեսական մանրամասն հետազոտություններ, 2. հայ բազմադարյան բանաստեղծության կիրառած բոլոր չափերի և հանգերի հանգամանալից նկարագրություն և քննություններ, 3. հայ տաղաջափական իրողությունների զիտական նորմավորումներ: Ուրիշ կերպ ասած՝ Աբեղյանը հայոց լեզվի տաղաջափությունն ուսումնասիրում է տեսական և գործնական մոտեցումներով:

Մանրամասնությունների մեջ հարկ չհամարելով մտնել, այստեղ ընդհանրացված կարգով նշենք հետևյալը:

Տաղաջափության հիմունքների հիմնավոր ու բազմակողմանի մշակումը հայ բանասիրության պատմության մեջ վիճակվում է Մ. Աբեղյանին: Նա, նկատի առնելով ընդհանուր երաժշտագիտության ու տաղաջափության հետազոտության մեթոդական-տեսական սկզբունքները, հայերենի հնյունարանական-առողանական բազմազան իրողությունների և հայ հազարամյա բանաստեղծության ընձեռած տաղաջափական հա-

<sup>16</sup>Տէ՛ս Մ. Աբեղյան. Հայոց լեզվի տաղաջափություն. Երևան, 1933, էջ 7, 147:

րուստ նյութի հանգամանալից քննությամբ, ստեղծում է տաղաչափության մի տեսություն, որն իր սկզբունքներով ու տարերքով թեպետ ընդհանուր, բայց իր նյութով, ոգով ու ներքին օրինաչափություններով ունի հայկական բնույթ: Դա հայերենի տաղաչափական իրողությունների ձևատումն էր տեսական ընդհանուր սկզբունքների վրա, հետևաբար և հայոց լեզվի տաղաչափության ընդհանուր տեսությունը:

Ելնելով հայոց լեզվի առանձնահատուկ շեշտից ու առողանությունից, հակառակ հայագիտության մեջ մինչ այդ հայերեն ուսանավորը վանկային համարելու արմատացած տեսակետին, Աբեղյանն ապացուցում է, որ մեր ուսանավորը վանկաշեշտային է, իր «ուրույն բնավորությամբ մի առանձին տեղ է բռնում ուստերեն և ֆրանսերեն ուսանավորների միջև»<sup>17</sup>: Այս տեսակետին Աբեղյանը հանգել էր տակավին իր գիտական գործունեության ազգային: 1889-ին, իր անդրանիկ գիտական աշխատանքի՝ «Դավիթ և Սիերի» առաջարանում, խոսելով վեպի իր գրառած պատումի տաղաչափական հատկանիշների մասին, երիտասարդ Աբեղյանը նկատում է, որ «ամբողջ ուսանավորը հորինված է ձայնական (շեշտական, тонический) չափով և կազմված է մեծավերջ (յամ) և վերջատանջ (անապետ) ուսքերի խառնուրդից՝ երկար և կարճ տողերով»<sup>18</sup>: Ավելին, Աբեղյանը շեշտական տաղաչափության հատկանիշը նկատում է ոչ միայն մեր ժողովրդական վեպում, այլև Խորենացու ավանդած հնագույն վիպական բանահյուսության նմուշներում («Երկներ երկին» և մյուս հատվածներում), հետագայում նաև իին ու նոր քնարական երգերում (հայրեններ, խաղիկներ) և մեր միջնադարյան հեղինակների տաղերում: Դրանով նա հավաստում է մի կողմից մեր գրական ու բանահյուսական երկերի տաղաչափական միասնությունը, մյուս կողմից՝ վստահ ու համարձակ առաջ է քաշում մեր իին ու նոր բանաստեղծական հուշարձանների ուսանավորի շեշտական լինելու բոլորովին նոր տեսակետը:

Տաղաչափության մեջ ելակետային արժեք տալով ամանակին և շեշտին, Աբեղյանը գտնում է, որ հայերենի ուսանավորի կարևոր հիմքն է դառնում վանկերի հավասար թիվը և շեշտը, ոչ թե ամանակն ու շեշտը, քանի որ հայերենում վանկերի երկարությունն ու կարճությունը հաստատուն արժեք չունեն, մինչդեռ շեշտի զգացողությունն ավելի է զարգացած:

Այս իմաստով էլ Աբեղյանը տաղաչափության մեջ առաջնակարգ տեղ էր հատկացնում ոիթմական շեշտերին, որոնք առանձնահատուկ տեղ ունեն շեշտային ուսանավորների մեջ և այլ կարգի (քերականական, առողջական, տրամաբանական և այլն) շեշտերի կողքին որոշում են ուսանավորի տաղաչափական որակը:

Հայ բազմադարյան բանաստեղծության չափերի տիպարանական հետազոտությունը կատարելիս Աբեղյանը տիպարաժանման հիմքում դնում է բանաստեղծական ուսքերի տեսակները, դրանց կազմությունը և շեշտերի դրությունը: Հստ այդմ՝ հայ բանաստեղծության մեջ նա բացահայտում է 17 հիմնատեսակներ՝ իրենց տարրեր ենթատեսակներով, որոնց մեջ գերիշտող սիրված չափերն են յամբական, անապեստյան և

<sup>17</sup> «Համբավարեր», Թիֆլիս, 1916, № 27, էջ 860:

<sup>18</sup> Մ. Ա բ է դ յ ա ն. Դավիթ և Սիեր. Շուշի, 1889, էջ Զ:

յամբ-անապեստյան խառն ոտքերով ոտանավորները: Իսկ պատմական զարգացման առումով հայկական ոտանավորների չափերը իրենց հիմնական ձևերով ու ենթատեսակներով արդեն ձևավորված ու գործածական են եղել VII–XI դարերի հայ բանաստեղծության մեջ:

Մրանք են իշխան ընդհանրացված՝ U. Արելյանի բազմավաստակ գործունեության արդյունքների համառոտ ուրվագծերը, որոնք բնութագրվում են նորարարության, հայտնագործությունների և գիտական համակարգեր ստեղծելու բազում սիրանքներով, որոնց շնորհիվ նոր հայագիտությունն իր չորս կարևոր ճյուղերով բարձրացավ զարգացման մի անախաղեպ աստիճանի:

Արելյանի գիտական ժառանգությամբ մի ամբողջ դարաշրջան է նշանավորվում հայագիտության պատմության մեջ: «Արելյանի շնորհիվ, գրել է Ավ. Խահակյանը, – մեր ազգային-հոգնոր միջավայրը լցված է իմաստությամբ և հեղինակությամբ, լրջությամբ և վեհ նպատակների հետապնդումով»<sup>19</sup>: Իսկ Նիկոլ Աղբայանի բնութագրմամբ՝ U. Արելյանը «մտավորական մեծ ճիզի մարդ էր, որ կազմակերպել է մեր ազգային գիտակցությունը» հայ հոգեոր մշակույթի տարբեր բնագավառների նկատմամբ: «Պատմական և հանրային մեծ ծառայություն է ասիկա հայ մշակույթին, որ փառքով պետք է արձանագրվի և անկորուստ մնա հայոց գրականության պատմության մեջ»<sup>20</sup>:

МАНУК АБЕГЯН.  
ОЧЕРК ОЦЕНКИ НАУЧНОЙ ЗАСЛУГИ  
(К 140-летию со дня рождения)

*САРГИС АРУТЮНЯН*

Р е з ю м е

Манук Абегян (1865–1944) – крупнейший представитель классического арменоведения, в научной деятельности которого сосредоточиваются четыре области армянской филологии: армянская фольклористика, историография древнеармянской литературы, армянская лингвистика и армянская метрика. Получив высшее образование в крупных европейских университетах и начав свою научную деятельность в конце XIX столетия, М. Абегян, вооруженный передовыми знаниями своего времени, постепенно приступил к системному изучению различных жанров армянской народной традиции (эпическая словесность, древние мифы, старые и новые лирические песни, верования и пр.), тем самым создавая армянскую фольклористику как самостоятельную научную дисциплину. В течение всей своей научной деятельности Абегян исследует выдающихся представителей, факты и явления древнеармянской литературы, устанавливает основные периоды ее развития, раскрывает ее внутренние закономерности и тем самым создает научную историю древнеармянской литературы. На основе глубокого изучения восточноармянского языка М. Абегян, со-

<sup>19</sup> «Գրական թերթ», 1959, № 40:

<sup>20</sup> Ն. Աղբայան. Ամբողջական երկեր, I, Գրական-բննադատական երկեր, Բեյրութ, 1950, էջ 410–411:

здавая теорию и строгую научную систему новоармянской грамматики, являлся также автором новоармянской орфографии. Всесторонне исследовав многовековое искусство армянского стихосложения, Абегян создал новую научную дисциплину по армянской метрике. М. Абегян в своих многогранных и разновидных исследованиях является автором ряда крупных научных открытий и выступает как выдающийся новатор. Благодаря своей яркой индивидуальности и огромной эрудиции, Абегян выводит названные области науки из консервативной ограниченности на широкую арену и тем самым поднимает арменоведение на новую ступень развития. Своими огромными научными заслугами Манук Абегян знаменует целую эпоху в истории арменистики.